ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Թիվ 057/21

«27» նոյեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ պարոն՝
Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ձեզ է ներկայացվում Հալավար համայնքի ավագանու N 17-Ա, N 18-Ն, N 19-Ա, N 20-Ա, N 21-Ա, N 22-Ա որոշումները:

Առդիր՝ 11 թերթ:

Հալավար
համայնքի ղեկավար *Ս. Հակոբջանյան*

Ստացվել է ուղարկման 02.12.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար
էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը նոյեմբերի 2015 թվականի

N 17-Ա

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով.

Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հալավար համայնքում 2015 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում կատարված համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (3)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
Աբազյան Գոհար Երվանդ			
Բաբայան Վահրամ Շահվալադի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			

Հալավար համայնքի ղեկավար Ս. Հակոբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » նոյեմբերի 2015 թվականի N18 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Հալավար համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հալավար համայնքում 2016թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (3)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Աբազյան Գոհար Երվանդի			
Բաբայան Վահրամ Շահվալդի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			

Հալավար համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբջանյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Հալավար համայնքի ավագանու

նոյեմբերի 23-ի 2015 թվականի թիվ N18-Ն որոշման

ՀՀ ԼՄ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1)հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հազար դրամ,

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև երեսուն հազար դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հարյուր դրամ,

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանել՝ շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ:

3) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝երկու հազար դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝հինգ հարյուր դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառ մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի *թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝տասնհինգ հազ դրամ:*

6. Համայնքի տարածքում թանկարժ մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի *թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ հիսուն հազար դրամ:*

7.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարական կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել՝ երեք հազար դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճար սահմանել՝ երկու հազար դրամ:

14. ՀՀ համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ երեսունհազար դրամ:

Հալավար համայնքի ղեկավար՝ *Ս. Հակոբջանյան*

23 նոյեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը նոյեմբերի 2015 թվականի ականի

N 19 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հալավար համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները.

Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.

4. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
5. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (3)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Աբազյան Գոհար Երվանդ			
Բաբայան Վահրամ Շահվալադի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			

Հալավար համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբջանյան

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Հալավար համայնքի ավագանու

2015 թվականի 23 -ընոյեմբերի N 19 - Որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

3. Վալենտինա Ժուրա - 25 000/քսանհինգ հազ/ դրամ,

4. Լիզա Դանիելյան - 25 000/քսանհինգ հազ/ դրամ:

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 50 000/հիսուն հազ/ դրամ:

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

(ստորագրություն)

ՏԱԹԵՎԻԿ ԱԲԱՋՅԱՆ

(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը նոյեմբերի 2015 թվականի ականի

N 20 -Ա

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հալավար համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումը.

Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.

Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից Քալաշյան Հենրիկի մահվան 25000(քսանհինգ հազար) դրամ գումարը հատկացնել նրա կնոջը՝ Օֆելյա Սարիբեկյանին:

1. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (3)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
Աբազյան Գոհար Երվանդ			
Բաբայան Վահրամ Շահվալադի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			

Հալավար համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը նոյեմբերի 2015 թվականի ականի

N 21 -Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ, 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով և 72-րդ հոդվածով

Հալավար գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հալավարի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հալավարի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 10-ի «Հալավարի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 7-Ա որոշումը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ (3)*	*Դեմ (0)*	*Չեռնպահ (0)*
Աբազյան Գոհար Երվանդի			
Բաբայան Վահրամ Շահվալդի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			

Հալավար համայնքի ղեկավար *Ս. Հակոբջանյան*

Հավելված

Հալավարի գյուղական համայնքի ավագանու

2015 թվականի նոյեմբերի 23-ի N 21-Ա որոշման

ՀԱԼԱՎԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4 (չորս)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	125000
Համայնքի. գյուղապետարանի. աշխատակազմի քարտուղար	1	100000
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	82000
Տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատող-հավաքարար	1	72760
Ընդամենը	4	379760

Հալավար

համայնքի ղեկավար Ս. Հակոբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը նոյեմբերի 2015 թվականի

N 22 -Ա

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.

Հալավար գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Ստեղծել Հալավար համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման/կազմման/, հանրային քննարկման, իրականացման /կատարման/ և վերահսկման խորհուրդ հետևյալ կազմով՝

1, Տաթևիկ Աբազյան Սամվելի- համայնքի աշխ. քարտուղար, խորհրդի նախագահ
2, Վահե Սարիբեկի Գրիգորյան- աշխ. համայնքային ծառ., խորհրդի քարտուղար
3, Վահրամ Շահվալադի Բաբայան – ավագանու անդամ, խորհրդի անդամ
4, Նինա Լևոնի Մարտիրոսյան- ավագանու անդամ, խորհրդի անդամ
5, Վոլոդյա Վասիլի Հակոբջանյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ
6, Տրդատ Մինասի Իսմայիլյան- ավագանու անդամ, խորհրդի անդամ
7, Լևոն Սիմոնի Արոնյան- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ:

2. Խորհրդին՝ գործունեությունն իրականացնել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 24 –ի ՝՝Հալավար համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին՝՝ թիվ 19-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հալավար գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հալավար համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին» թիվ 20-Ա որոշումը :

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ (3)*	*Դեմ (0)*	*Չեղոնպահ (0)*
Աբազյան Գոհար Երվանդի			
Բաբայան Վահրամ Շահվալդի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			

Հալավար
համայնքի ղեկավար *Ս. Հակոբջանյան*